



ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք  
Հայաստանի համահայկական հիմնադրամ  
Հասարակութեան հետ կապերու բաժին  
Հեռ: + (374 10) 521505  
[pr@himmadram.org](mailto:pr@himmadram.org)  
[www.himmadram.org](http://www.himmadram.org)

## Մամուլի հաղորդագրություն

### Սուրիոյ Հայ Կարօտեալներու Պետքերը Հոգալու Համար Նոր Հանգանականութիւններ Կազմակերպուած են

**Երևան, Յունուար 29, 2014:** Սուրիոյ հայկական համայնքին աջակից եւ սատար ըլլալու միտումով աշխարհի տարբեր անկիւններէ հայորդիներ կը շարունակեն դրամական յատկացումներ ընել, իրենց եղբայրներուն ծանր վիճակը մեղմելու համար: Սոյն տարուան սկիզբէն ի վեր ,Հայաստանէ Հիմնադրամի դրամատնային հաշիւին այս նպատակով փոխանցումներ եղած են:

Հիմնադրամի Ֆրանսայի Տեղական Մարմինի ջանքերուն շնորհիւ հանգանակուած 100. 000 եւրօն Մեծի Տանն Կիլիկիոյ առաջնորդարանի օգնութեամբ պիտի ծառայէ Սուրիոյ հայութեան զանազան խնդիրներու պատշաճ լուծումին: Գերմանիոյ Տեղական Մարմինի գործունէութեան շնորհիւ ձեռք ձգուած 35. 000 եւրօն արդէն հասած է Սուրիոյ Հայութեան Օգնութեան Եւ Վերականգնումի Մարմինին՝ հոն ապրող հայերուն Մարմինի անդամներուն պատեհ տեսած ձեռով օժանդակելու: Իսկ 2013ին տեղի ունեացած հեռուստատեսային մարաթոնին հանգանակուած գումարներէն 15 միլիոն ՀՀ դրամ Սուրիայէն Հայաստան փոխադրուած հայ ընտանիքներու անմիջական պետքերը հոգալուն պիտի տրամադրուի: Վերոյիշեալ նախաձեռնութեան եւ յատկացումին շնորհիւ է որ պիտի իրականանայ առողջապահութեան, կրթութեան եւ ընկերային մարզերէն ներս բազմաթիւ ծրագիրներ, գոր օրինակ վիրաբուժական ծանր գործողութիւններ, Հայաստանի տարբեր կրթական հիմնարկներէն ներս սորվող ուսանողներու տարեկան կրթաթոշակներու տրամադրում, յուղարկաւորութեան ծախսերը հոգալ, եւ այլն:

Ընթերցողներուն յիշեցնենք որ Սուրիոյ հպատակ հայերուն օժանդակելու միտումով բացուած դրամական եւ օտար դրամանիշերու դրամատնային հաշիւներ մեծագումար յատկացումներու նշանակալից մասը ,Հայաստանէ Հիմնադրամի Ֆրանսայի, Գերմանիոյ, ԱՄՆ Արեւմտեան Ափի, Արժանդինի, Պրագիլի, Լիբանանի, Շուէտի տեղական մարմիններու կողմէ՝ 2012ի եւ 2013ի հեռուստատեսային մարաթոնի ընթացքին հաւաքուած գումարներէն, ինչպէս եւ Հայաստանի եւ արտասահմանի մէջ գործող տարբեր հիմնարկներու եւ բարերարներու ըրած սրտաբուխ նուիրատուութիւններէն կու գան (Հրայր Յովնանեան, Արա

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահոյք չհետապնդող կազմակերպութիւն է, որը հիմնադրուած է 1992թ-ին, որուն նպատակն է խթանել մարդասիրական գործունէութիւնը եւ տարբեր հաստատութիւններու եւ կառոյցներու մասնաճիւղերու զարգացումը ՀՀ-եան եւ ԼՂՀ-եան մէջ: Հիմնադրամը ունի 25 տեղական մարմին ամբողջ աշխարհի մէջ:

Աբրահամեան, Փեթակե ՍՊԸ, Հայրուսկազարտե ՓԲԸ, Գալուստանեան Բաֆֆի Բարեգործական Կեդրոն, ՀՀ Դատաւորներ, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Մասնաճիւղ ՊՈԱԿ, Բանանց Ֆութպօլի Ակումբ, Գիւմրիի Կարա Միրզայի Երաժշտական Դպրոց, Տուրուանդ ՍՊԸ, եւ այլն):

Վերոյիշեալ համահայկական եւ հայանպաստ գործունէութեան շնորհիւ է որ առողջապահութեան, կրթութեան եւ ընկերային մարզերէն ներս բազմաթիւ ծրագիրներ իրագործուեցան: 2013ի Յունիսին Հիմնադրամի Ֆրանսայի (100, 000 եւրօ), Գերմանիոյ (12, 000 եւրօ) եւ Լիբանանի Տեղական Մարմինները Սուրիոյ մէջ ապրող հայերուն օգնելու նպատակով տարբեր ծրագիրներու իրագործումին արդէն աջակցած էին, մասնաւորաբար Հալէպի հայկական դպրոցներուն մէջ աշխատող ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն ամսականները տրամադրած:

Հայաստանէ Հայկական Հիմնադրամի Պրագիլի, Արժանդինի եւ Շուէտի Տեղական Մարմիններու հանգանակած գումարներուն շնորհիւ Հայաստանի 14 կրթական հիմնարկներու մէջ ուսանող 110 սուրիահայատակ հայ ուսանողներու տարեկան կրթաթոշակները տրամադրուած են: Այդ նպաստներուն օգնութեամբ նաեւ վեց հոգիի վիրաբուժական ծանր գործողութիւններու եւ երեքի յուղարկաւորութեան ծախսերը հոգացած են: Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Ափի յատկացուցած 10, 000 ԱՄՆ տոլարին շնորհիւ Երեւանի Կիլիկեան դպրոցի կարգ մը պետքերը ամբողջացուցած է դպրոցի ղեկավարութիւնը: Իսկ Հրայր Յովնանեանի եւ Արա Աբրահամեանի նպաստներուն պտուղը եղաւ այն, որ Սուրիոյ հայերուն Հայաստան տեղափոխող ձրի թռիչքը իրականացաւ:

**«Հայաստան» Համահայկական Հիմնադրամ**  
\* *նշել աղբիւրը*